ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Դավթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-371-29.10.2013-ՄԻ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար է համարում ստեղծագործական միությունների՝ «հասարակական կազմակերպություն» կազմակերպական իրավական ձևի պահպանումը և այդ կազմակերպությունների անվանումներում նաև «ստեղծագործական միություն» բառերի օգտագործման հնարավորության սահմանումը (օրինակ՝ «Հայաստանի գրողների ստեղծագործական միություն» հասարակական կազմակերպություն):

Միաժամանակ հայտնում ենք, որ օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես, նախագծում՝

1) 3-րդ հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին.

2) 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված «2-րդ մասում» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «երկու» բառը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *մշակութային և ստեղծագործական բնագավառներում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կարգավիճակի հստակեցմանը, մասնավորապես՝ առաջարկվում է 50-ից ավելի տարի գործունեություն իրականացնող կազմակերպություններին հնարավորություն ընձեռել պահպանել «ստեղծագործական միություն» անվանումը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) 50 և ավելի տարի գործունեություն իրականացնող կազմակերպություններին հնարավորություն է տրվում պահպանել «ստեղծագործական միություն» անվանումն ու իրավահաջորդությունը,

2) կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է չորս տարին մեկ անգամից ոչ պակաս:

Միաժամանակ, վերոնշյալ օրենքի նախագծով առաջարկվում է հստակեցնել կազմակերպության բարձրագույն մարմնի ղեկավարի և կազմակերպության գործադիր ղեկավարի ընտրության կամ նրա լիազորությունների դադարեցման հարցը, եթե առկա է բարձրագույն մարմնի անդամների մեկ երրորդի նախաձեռնությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագծի) ընդունումն ուղղված է երկրի մշակութային և ստեղծագործական բնագավառներում առկա կազմակերպությունների նպատակային գործունեության խթանմանը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՆԱԽԱԳԻԾ

Պ-371-29.10.2013-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հասարակական կազմակերպություն մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերին 4-ի ՀՕ-268-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածում 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Եթե միավորումը 50 եւ ավելի տարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով գործում է որպես ստեղծագործական միություն, կարող է պետական գրանցում ստանալ պահպանելով «ստեղծագործական միություն» անվանումը եւ իրավահաջորդությունը:»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «միություն» բառը:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում բառը փոխարինել «չորս» բառով.

2) 6-րդ մասը լրացնել 3.1-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3.1) կազմակերպության բարձրագույն մարմնի ղեկավարի եւ կազմակերպության գործադիր ղեկավարի ընտրության կամ նրա լիազորությունների դադարեցման հարցը՝ եթե առկա է բարձրագույն մարմնի անդամների մեկ երրորդի նախաձեռնությունը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի վերաբերյալ

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող լրացումները եւ փոփոխությունները պայմանավորված են երկրի մշակութային եւ ստեղծագործական բնագավառներում առկա կազմակերպությունների նպատակային գործունեությանը խթանելու, ավանդական ստեղծագործական կազմակերպությունների փորձն ու ներուժը մշակութային զարգացումներին ուղղելու եւ վերջիններիս դերն ու կարգավիճակը որոշակիացնելու միտումով:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունումով, ավանդական ստեղծական միությունները, լինելով ոչ առեւտրային կազմակերպություններ, իրենց կազմակերպա-իրավական տեսակով վերակազմակերպվեցին որպես հասարակական կազմակերպություններ՝ կորցնելով հանրային ճանաչում եւ հեղինակություն ձեռք բերած իրենց «ստեղծագործական միություն» անվանումը կրելու իրավունքից:

Օրենսդրական նախաձեռնությամբ հնարավորություն է տրվում 50-ից ավելի տարի գործունեություն իրականացնող կազմակերպություններին պահանելու իրենց ճանաչումը:

Հասարակական կազմակերպությունները, այդ թվում՝ ստեղծագործական միությունները, իրենց կանոնադրական եւ նպատակային բնականոն գործունեության, մշակութային քաղաքականությանը խթանող ծրագրերի եւ ոլորտային խնդիրների կարգավորման վրա ջանքերը կենտրոնացնելու փոխարեն, առավել հաճախ մտահոգ են ղեկավար կազմի ընտրության կամ վերընտրության հարցերով:

Համաձայն գործող օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է 2 տարին մեկ անգամից ոչ պակաս, իսկ 6-րդ մասի 3-րդ մասում նշվում է, որ կազմակերպության բարձրագույն մարմնի բացառիկ իրավասությունն է «բացառապես կազմակերպության բարձրագույն մարմնին ենթակա եւ հաշվետու մարմինների (եթե կազմակերպությունը, բացի բարձրագույն մարմնից, ունի այլ մարմիններ), այդ թվում՝ կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ընտրությունը, այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ընդ որում, նրանց լիազորությունների ժամկետները չեն կարող սահմանվել ավելին, քան կազմակերպության հերթական ժողովի հրավիրման՝ կանոնադրությամբ սահմանված պարբերականությունն է.»: Զեւակերպումից հստակ չի, թե որքանով է կազմակերպության նախագահը կամ գործադիր տնօրենը «ենթակա բարձրագույն մարմնին», սակայն հոդվածը կարող է թույլ տալ դրույթը ընդհանրապես չկիրառել կազմակերպության նախագահի եւ գործադիր տնօրենի ընտրության կարգավորման վրա, մյուս կողմից ստացվում է, որ եթե կանոնադրությամբ որոշվի 6 ամիսը մեկ կամ յուրաքանչյուր տարի անցկացնել ժողով, ապա այդ պարբերականությամբ հարկ կլինի անցկացնել ընտրություններ:

Օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է երկու տարվա պարբերականությունը փոխարինել 4 տարով, դրանով հնարավորություն տալով իրապես իրագործել նախատեսված ծրագրերը եւ ջանքերը կենտրոնացնել նպատակային գործունեության վրա: Բացի դրանից «ոչ պակաս» հասկացությունը չի սահմանափակում կանոնադրությամբ առավել կարճ ժամկետ սահմանելու հնարվորությունը: Մյուս կողմից օրենսդրական առաջարկով հստակեցվել է ղեկավար անձի ընտրության հարցը, այն առանձնացնելով վերստուգիչ եւ այլ մարմինների կազմից: